

## Գարեգին Նժդեհի ծննդեան 125-ամեակին

Ռաֆայէլ Համբարձումեան  
(Հղւած Ապագային)



Մինչեւ 2007 թ. փետրուարի 2-ը Գարեգին Նժդեհի ծննդեան օրը համարում էին յունուարի 1-ը, որը զուտ խորհրդանշական իմաստ ունէր: Ըստ 1916 թ. իր ձեռքով լրացրած «Ծառայողական ցուցակ»-ի, նա ծնուել է 1886 թ. յուլեան տոմարով յունուարի 20-ին, որը ներկայ տոմարով փետրուարի 2-ն է: «Ծառայողական ցուցակ»-ը պահպանուում է Թիֆլիսի պետական դիւանում, որը յայտնաբերել եւ բնագրով ու հայերէն թարգմանութեամբ առաջինը հրատարակել է պատմաբան Վ. Մելիքեանը՝ Պատմաբանասիրական հանդէսի 2001 թ. թիւ 1-ի էջ 250-ում: Փաստաթուղթը տես նաեւ Ռ. Համբարձումեան, Գարեգին Նժդեհ, Ամբողջական կոնսագրութիւն, Երեւան, 2007 թ., էջ 57:

Գարեգին Նժդեհին 1933-1938 թթ. ազատութեան մէջ հոգեկան խոշտանգումով մարտիրոսացրեց ՀՀԴ ԲԻԻՐՈՆ, 1944 թ. հոկտեմբերից 1955 թ. յունուարի 21-ը բանտարկութեան մէջ՝ մարմնական խոշտանգումով նահատակեց Կրեմլը

Վենետիկի ս. Ղազար կղզում են պահուում Գարեգին Նժդեհի ցայսօր անյայտ աւելի քան 40 բանաստեղծութիւն եւ 20-ի չափ բացառիկ արժէքաւոր նամակներ՝ ուղղուած ԱՄՆ ցեղակրօն ուխտերի յայտնի գործիչ, 1930-ական թթ. ՀՀԴ ԱՄՆ կեդրոնական կոմիտէի անդամ, Գարեգին Նժդեհի վստահելի ու սիրելի բարեկամներից մէկին՝ Յովհաննէս Յովհաննէսեանին: Շնորհակալութեամբ ծանուցում են, որ ձեռագրերը յայտնաբերել եւ պատճեններն ինձ է տրամադրել Հայաստանի Կաթողիկէ Հայոց առաջնորդ, հայր ՎԱՀԱՆ Ծ. Վարդապետ Օհանեանը :

Ձեռագրերին կցուած է ս. Ղազարի միաբան Սահակ վրդ ճենճենեանի հետեւեալ գրութիւնը. «Ներփակ կան համբաւաւոր դաշնակցական գործիչ Նժդեհի նամակները, ուղղուած

Յովհաննէս Յովհաննէսեանին: Սա վերջինս ս. Ղազար բերած էր այս նամակները, եւ երբ մեկնելու վրայ էր, 27 սեպտեմբեր 1971 ին, ես ստորագրեալս խնդրեցի իրմէ որ ինծի ձգէ: Ուրախութեամբ յանձնեց, յուսալով որ ես հրատարակեմ եւ ինքը իր կեանքի վերջաւորութեան գոնէ տեսնէ եւ ուրախանայ:

Ապագային դիւանին համար օգտակար կրնան ըլլալ, Դաշնակցութեան պատմութեան:

Յ. Սահակ Գեմճեմեան, Ս. Ղազար, 29 սեպտ. 1971 »



Բանաստեղծութիւնները ո՛չ, բայց նամակները դժուարընթեռնելի են: Վերծանումին խանգարում է ոչ միայն շտապով գրուած լինելը եւ որոշ նամակների խունացածութիւնը, այլեւ այն հանգամանքը, որ դրանցում Նժդեհը գործածել է իր ստեղծած բազմաթիւ բառեր, որոնք մեր լեզուում չկան, ինչը մեծապէս դժուարացնում է անընթեռնելի բառը ինչ որ յայտնի բառի նմանեցնելով՝ կռահել թէ ինչ է գրուած... Ահա՛ այդ բառերը՝ *ահաւորօրէն, ամենատգիտականութիւն, անշնչելի, անցեղաճանաչ, դաւակից, դաւամտութիւն, Դիակնացած, դրդազին քայլեր, երկարօրէն, ընկերադաւ, թշնամանալ, ժամանակասպանութիւն, ինքնանկարող, իրարեկերութիւն, խորհողութիւն, կիսամտաւորական, կուսակցաւեր, հակացեղակրօնութիւն, համագաղութայնացնել, հայրենաքանդութիւն, հայօրէն, հացապաշտ, հնարակեղծ, հպարտանք, ծարտարելու կարողութիւն, մանրօրէն, նախանձալի(նախանձով լի, Ռ. Յ.), պատկերամարտիկ, տգիտանք, ցեղանորոգ, ցեղաշարժում, ուժաստեղծ, քաջայոյս:*

Նշածս նամակներում Գարեգին Նժդեհը տալիս է Ցեղակրօնութեան եւ Տարօնականութեան բացատրութիւնները, որոնք բացառիկ են այն իմաստով, որ է՛լ աւելի են ամբողջացնում

ու պարզաբանում դրանց էութիւնը բացայայտող Նժդէհի սահմանումները: **«Տարօնականութիւնը- դա միեւնոյն ցեղակրօնութիւնն է հասակն առած սերունդի համար»**, հաստատում է նա իր 1936 թ. նամակներից մէկում: Իսկ 1937 թ. *յունուարի 7-ի նամակում գրում է.* «Կարելի է--չարաբանում են ներքին թշնամիները--առանց ցեղակրօն անուան էլ նորահաս սերունդը ցեղապաշտ դարձնել»: Այդ պնդումի մէջ և՛ շառլատանութիւն և՛ վատութիւն կայ: Դա ասել է՝ մէկին կարելի է քրիստոնէայ դարձնել առանց Քրիստոսի եւ քրիստոնէութեան: Սրանք էապէս անուան դէմ չեն միայն, այլ՝ ցեղի, Ցեղակրօնութեան: Յաջողեցա՞ն այսօր անունը փոխել տալ, վաղն այլեւս վրան բաց կերպով կհալածեն մեր դաւանանքն ու նորահաս տարիքը... Գիտէք, որ Ցեղակրօնութիւնն էլ ունեցաւ իր ներքին թշնամիները: Հայկական հրէշային նախանձը եւ տգիտութիւնը, որոնք պատճառ դարձան, որ Ցեղակրօնութիւնը հնարաւորութիւն չունենայ դուրս գալու իր ծննդավայրէն՝ Ամերիկայէն եւ տարածելու Հայոց սփիւռքի մէջ: Մեր նորագոյն պատմութեան մէջ ես չգիտեմ ասելի մեծ դաւաճանութիւն՝ կատարած մեր ցեղի դէմ- քան այն, որ հայկական կոյր նախանձն ու տգիտութիւնը կատարեցին Ցեղակրօն շարժման դէմ: Այդ շարժման մէջ մէկն իր Հոգեւոր մահը տեսաւ, երկրորդը՝ իր ազդեցութեան տկարացումը Դաշնակցութեան մէջ, երրորդը՝ մեր ուխտերի մէջ ցեղի խռովքի փոխարէն, մատ ու քուէներ տեսաւ, սարսափե՛ց, ապա սկսեց դաւել նրա գոյութեան եւ ծաւալումի դէմ: Եւ այդ իսկ պատճառով մեր ստեղծած ջահել, ցեղանորոգ եւ փրկարար շարժման ճակատագիրն եղաւ այն, ինչ որ կուզէին թուրքն ու բոլշեւիզմը-մեր ցեղի օրւայ երկու մահացու թշնամիները... Չէ՛ կարելի ջահել լինել-պատանի ու երիտասարդ լինել-եւ ցեղակրօն չլինել: Ով ուզում է- սա պէտք է ընդունել որպէս օրէնք -ով ուզում է ոյժի վերածել եւ իր ցեղի դիմադրական ոյժն աճեցնել՝ մի տեղ, մի՛ , միայն մի՛ տեղ ունի-Ցեղակրօն ուխտե՛րը»:

Նամակներում նա անդրադառնում է բազմաթիւ այլ հարցերի ու երեւոյթների եւս:

1936 սեպտ. 1-ի նամակում գրում է. «Երբ Վ-նը(հաւանաբար՝Վահան Նաւասարդեանը, Ռ.Հ..) «Դաշնակցութեան օրւայ»առթիւ անցեալ տարի Ֆրանսիայում կճառէր՝ «Հայրենիքն է հայի համար և ոչ թէ հայը՝ հայրենիքի--

այս է Դաշնակցութեան դաւանանքը: Հայ անհատը ամենից առաջ, և ամէն բանից վեր»... Երբ այսպէս կհասկացւիր Դաշնակցութիւնն ու իր դաւանանքը, իսկապէս որ պէտք է ընդունենք, թէ «մեր պայքարը աւելորդ է»: Վահանի համար Հայրենիքը միջոց է, անհատը՝ նպատակ: Նրա համար Հայրենիքը երկրորդական բան է, անհատն է «ամէն բանից առաջ և ամէն բանից վեր»: Միջոց-Հայրենիքը չի պաշտօնիր, և նրա համար չեն մեռներ: Նպատակ-անհատն է սուրբը, «ամէն բանից վեր»ը, գերագոյնը... Ըստ Վահանի՝ Հայրենիքը միջոց է, նա պիտի ծառայի և մեռնի զգուշի անհատի, պատահական հայ կարապետի համար: Նման միջոց-Հայրենիքը պէտք է կործանւիր և կործանւեց: Նմանը պէտք է անցնէր Հայրենիքների մասին աւելի բարձր բարոյական հասկացողութիւն ունեցող թուրքի եւ բուլղարիկի ձեռքը, և անցաւ... Միջոց-Հայրենիքը (ինչպիսի պղծութիւն) կարող է միշտ էլ մնալ օտարի ձեռքը, կբաւէ, որ այդ օտարը աւելի զօրաւոր լինի, քան է այդ երկրի պատմական տէրը: Ահա՛ թէ ինչու Վ-եանի աշակերտ Սուրէնը գրում է «մեր պայքարը աւելորդ է»: Արդարև, ինչու՞ պայքարել, երբ ընդունել ենք թէ Հայրենիքը միջոց է միայն անհատն ապրեցնելու: Պայքարը պահանջում է զոհեր, զոհողութիւններ, իսկ այլասիրաբար, հայրենասիրաբար զոհում, զոհաբերում է միայն նա, ո՛վ Հայրենիքը համարում է գերագոյն նպատակ... **Մենք Դաշնակցութեան մէջ սրբութիւն եւ բարձր կրօնականութիւն կղենք, միւսները Դաշնակցութիւնը դարձրին հասարակ կազմակերպութիւն... մեր քարոզած Դաշնակցութեան կը մօտենա նորահաս սերունդը, իսկ միւսների քարոզածն՝ կխորշի, կը փախչէ»:**

Հայկական ցանկացած կառոյցի, ինչու չէ, նաեւ՝ ամէն մի անհատի համար այդ նամակները դասագիրք են, որից նա կարող է իմանալ թէ Նժդեհի համար ինչ ասել է օրէնք, իրաւասութիւն, ժողովրդավար ղեկավարի ընտրութիւն եւ այլն: Փնտրելի են **ղեկավարի եւ կարգապահութեան, անհատի եւ հայրենիքի** զուտ հայի խառնուածքով ու էութեամբ բացայայտումը այդ նամակներում, որոնք օգնում են հասկանալու, որ գոյութիւն ունի **նշուած** երեւոյթների զուտ հայկական հոգեբանութիւնը, որը մի եզակիութիւն է դրանք բնորոշող համաշարհային յայտնի ընթերցումների մէջ: Դրանք յայտանաբերել է ինքը՝ առանց այդ մասին որեւէ նամակի մէջ նման բան ասելու... «Ժողովրդավար ղեկավար լինելու համար նախ պէտք է լինել խոր, անկեղծ,

հոգեփոխիչ ապրումի մարդ: Այդ էլ բաւական չէ: Պէտք է լինել նաև՝ նոր գաղափարի, նոր ապրումի, նոր, վերակառուցող, աշխարհի մարդ: Սրա շրթունքներէն ծորէր զօրաւոր խօսքը, որէն հոգեւոր արիւն կաթեր: Այդ յատկութիւններին աւելացուր ամենէն անհրաժեշտը՝ **արիութիւնը** ...Ռոստոմի մահէն յետոյ (1919 թ. յունուար, Ռ.Յ.)Տէր Մինասեանները երկու սուտ աստուածութիւններու պաշտամունքը կքարոզեն-- կարգապահութիւն և կուսակցական մեքենա-- այս երկու բաները կշահագործեն ճիշտ այնպէս, ինչպէս խաչագողը՝ խաչը: Կարգապահութիւն-- ի՞նչ է դա: Ըստ Տէր Մինասեանի, կուսակցական և հոգեւոր իշխանութիւն. որ շարքայիները պարտաւոր են ցոյց տալու, բոլոր դէպքերում, անգամ երբ «շէֆ»-ը ժողովուրդը թողնում է կրակների մէջ և փախչում: Ոչ մի «բաւոր Պետրոս» այնքան օգտւած չէ այդ անբովանդակ խօսքէն, որքան՝ Տէր Մինասեանը... Կարգապահութիւն: Ճշմարիտ կարգապահութիւն ասել է՝ շարքայիների հաւատ դէպի իրենց ղեկավարների ամեն վայրկեան Հայաստանի համար մեռնելու, յանդգնելու, մի բան ճարտարելու կարողութեանը: Շարքերի մէջ կա՞յ այդ հաւատը: -Ո՛չ չկայ: Իսկ չկայ, որովհետեւ ղեկավարների մէջ հերոսական- բարոյական գործելու, զոհաբերելու, քաջաբար մեռնելու տրամադրութիւն չկայ: Ուրեմն, շառլատանութիւն է խօսել կարգապահութեան մասին, երբ ղեկավարութեան պակասում են սովորական մահկանացուներին յատուկ առաքիլութիւն... Ամեն ծառայութիւն , որ դառնում է վճարովի արհեստ՝ պղծում է»:

Գարեգին Նժդեհն իր այս նամակներում տալիս է նաեւ այն հարցերի պարզաբանումը, թէ ինչու գնաց Ամերիկա, ինչ արեց եւ ինչպէս արեց: 1936 նոյեմբերի 15- ի նամակում գրում է. «Ես չեկայ Ամերիկա ժողովրդականութիւն փնտրելու, այլ աշխատելու մեր ցեղի հոգու անսպառ հանքերում: Ամերիկան ոչինչ աւելացուց այն բանին, որ ես ստացած եմ Հայաստանէն, Լեռնահայաստանէն: Ամերիկան կռադաշտ չէ, որ նոր բան տար ինձ: Ամերիկայում ինձ յաջողւեց-հակառակ շատերի չկամութեան-ուղքի հանել հայոց ցեղը, ցեղայնութիւնը նորահաս սերունդի մէջ: Իսկ ինձ յաջողւեց, որովհետեւ ես Ամերիկա եկայ որոշ առաքելութեամբ, որովհետեւ ես ունէի իմ որոշ ճամփան, ես գիտէի իմ գործը, իմ անելիքը: Ես չեկայ հրահանգւելու եւ հրահանգներ կատարելու, ես եկայ հրահանգելու, ղեկավարելու»:

1930-ական թթ.նամակներից մեկում Գարեգին Նժդեհը խորհրդածում է. «Օհաննես, մի ժողովուրդ, որը չգիտե իր ներքին սրիկաները պատժել, չպիտի կարողանայ պատժել իր գոյութեան արտաքին թշնամիներին»: Մեկ այլ նամակում, շարունակում է. «Ամեն անգամ-հաստատում է պատմությունը- երբ ժողովուրդը բարոյական քաջություն չէ ունենում պատժելու իր դժբախտութեան հեղինակներին, այդ միեւնոյն հեղինակների միջոցաւ պատմությունը պատժում է ժողովուրդին: Ահա՛, սիրելիս, թէ ի՞նչն է տագնապեցնում ինձ»: Այս խօսքերով Նժդեհը երկիրն այսօրուայ աղետալից դուրս բերելու ճանապարհ է ցոյց տալիս մեզ...

1937 թ. մի նամակում Գ. Նժդեհը արդէն զգում էր պատերազմի անխուսափելիությունը եւ մտածում էր իր հիմնադրած ցեղակրօն ուխտերից ստեղծել Հայաստանի անկախությունը վերականգնելու եւ հայութեան ինքնապաշտպանությունը վարելու համար լեգիոններ(այդ գաղափարը 1942 թ.վերջերից մինչեւ 1943 թ. նոյեմբերը , **10 տարուայ ուշացումով**, բայց եւթինը խեղաթիւրած իրագործեց Դաշնակցութեան բիւրոն ` թոյլ չտալով ծառայելու բուն նպատակին): «Այսօր,- գրում էր նա իր 1937 թ. յունուարի 7-ի նամակում,- Ցեղակրօնությունը հող գտած կլինէր մեր բոլոր գաղութներում, ամէն գաղութ ստեղծած կլինէր ուխտածների իր լեգիոնը, այսօր մեր թիւը հասած կլինէր տասնեակ հազարի, եթէ մեզ յաջողէր ժամանակին զինաթափել ներքին չարությունը՝ տգէտ ու նախանձալի»... Մեկ այլ անթուակիր նամակում յաւելում է. «Այժմ մենք տասնեակ հազարի հասնող Ցեղակրօններ պէտք է ունենայինք Սփիւռքի մէջ, գաղութ գաղութ... Թուրքն իր կինը տղամարդ-զինուոր է դարձնում այսօր, մենք, իսկ մե՞նք...»

Իրաւ ընկերվար Գարեգին Նժդեհն իր այդ նամակներում բացայայտում է նաեւ սոցիալիզմ երեւոյթը վարկաբեկող «սուտ սոցիալիստներին»՝ նրանց յայտարարելով «նիւթապաշտիկ սրիկայութիւն քարոզողներ»: «Ցեղակրօնությունը ճշմարիտ սոցիալիզմին դէմ չէ, -գրում է նա իր մի նամակում,- հայ վարժապետի հասկացած սոցիալիզմին – որը դժբախտ Հայաստանում, մեր օրով դարձաւ բոլշևիզմ - դէմ պիտի լինի ամեն մի դաշնակցական, եթէ քաղաքական սրիկայ չէ դա: Սոցիալիզմէն մինչև բոլշևիզմը մի թիզ է, և ոչ աւելին: Բոլշևիզմը - դա սոցիալիզմի հոգևոր պիճն է: Թուրքէն զարնւած, կիւսած,

թուրքին հարևան լինել, և «սօցիալիզմից» բարբաջել, ասել է «իզագետալ» լինել, կենսաբանօրէն անբարոյական լինել, անհայրենասէր լինել: Մի ժողովուրդ, որն իր փիլիսոփայութիւնը, աշխարհայեցողութիւնը, կրօնն անգամ չի յարմարեցնում իր ինքնապաշտպանութեան պահանջներին, անբարոյական է և անապագայ»:

Նամակները բացառիկ նշանակութիւն ունեն 1920-1930-ական թթ. հայոց պատմութեան բազմաթիւ անմեկնելի, յաճախ խեղաթիւրուած հարցերը ճշտելու, նաեւ Յ.Յ.Դ. բիւրոյի եւ դրա երկար տարիների «ներկայացուցիչ» (ղեկավար) Ռ. Տէր-Մինասեանի հայրենադաւութիւնը բացայայտելու համար: Դաշնակցութեան բիւրոյի մօտ 25 տարիների անդամներից մէկը հանդիսացող այդ գործիչը պատմութեան մէջ մտաւ Գեորգ Չաուչին սպանելու (նա 1906-1908 թթ. եղել է Չաուչի խմբում) եւ այլ ոճիրների համար, ինչից շատ լաւ տեղեակ էին նրան այդ գործերին մղած, փողաւորած եւ ըստ ամենայնի օգնած սիոնիստ-մասոնները, որոնց գինւորն էր Ռ. Տէր-Մինասեանի հրեուհի կինը: Նրանք հենց իրենց այդ գործակատարի միջոցով էին աւելի քան 30 տարի, յատկապէս Ռոստոմի ու Արամ Մանուկեանի մահուանից յետոյ, 1919թ. մինչեւ 1951 թ., ղեկավարում Դաշնակցութիւնը՝ Ռուբէնին անընդհատ պահելով իրենց յսկողութեան տակ՝ ձեռնասուն չդառնալու դէպքում սպառնալով հրապարակել նրա ոճիրները: Նշուած ուժերը հայոց պատմութեան ճակատագրական հանգրուաններում են Ռուբէնի ձեռքով թիկունքից խփել մեր ազգին ու հայրենիքին (1915 թթ. 1000-աւոր Սասունցի-Մշեցիների զոհաբերումով՝ իր կաշին փրկելը, 1920 թ. հոկտեմբերի 30-ին առանց որեւէ կրակոցի Դարսի յանձնումը թշնամուն՝ Հայաստանի անկախութիւնը վերացնող ՀԻՄՆԱԿԱՆ դաւադրութիւնը, 1920 թ. օգոստոսի 10-ին բուլշեւիկների հետ Թիֆլիսում կնքած պայմանագրով Ջանգեզուրի ու Արցախի յանձնումը թշնամուն, Դաշնակցութեան ազգայնացումը վիժեցնելու նպատակով Յեղակրօնութիւն - Տարօնականութիւն ազգային գաղափարի դէմ 1930-ականների կազմաքանդիչ դաւերը եւ այլն եւ այլն): Այդ ուժերը Ռուբէնի միջոցով դաշնակցութեան մէջ հայրենապաշտութեան փոխարէն արմատաւորում են անահատապաշտութիւնը, ամէն ինչ անում, որպէսզի Նժդեհը աւարտին չհասցնի իր գերագոյն նպատակը՝ Դաշնակցութիւնը ցեղակրօնութեամբ-տարօնականութեամբ ազգայնացնելով՝

ազատագրել օտարի յսկողութիւնից: Իր նամակներից մէկում Գ. Նժդեհը այսպէ՛ս է փաստում-վկայում նշածս իրողութիւնը. «Արտաքին թշնամին զինակիցներ գտաւ Ղաշնակցութեան մէջ եւ դաւեց Ցեղակոնութեան դէմ»... Իսկ երկրորդ նամակում արձանագրում է.

« Ե՞րբ է տեսնւած, որ թէկուզ ամենէն հասարակ միութիւնը, կազմակերպութիւնը իր որոշումները փողոցի սեփականութիւնը դարձնէ... Ղա արւած է՝ արտասահմանին հասկացնելու, թէ իզուր աշխատանք է ցեղակոն ուխտեր ստեղծելը, քանզի Ղաշնակցութիւնը որոշած է աստիճանական այլանդակումով ոչնչացնել այդ կազմակերպութիւնը: Եղածը վատթարագոյն հարւածն է, որ տրւում է ցեղակոնութեան, եւ այդ այն օրերին, երբ գրեթէ մեր բոլոր գաղութներում ցեղային խռովք է սկսւած(երեւի կարդացիր «յառաջ»ի զայրալից հարցումը-«ինչու՞ կուշանա ցեղակոնութիւնը Ֆրանսիայի մէջ, ո՞վ է ասոր պատճառը»): Արդէն սպանւած է շարժումի հիմնական գաղափարը, նրա դաւանանքը եւ շուտով հերթը կուգա անունին: Ղաշնակցութիւնը բռնաւորող ծանօթ թայֆան(Բիւրոն, Ռ. Յ.) իրեն թշնամի է յայտարարում այն ամենը, ինչ որ բարոյական է, ինչը իրեն չէ նմանում: Հոգեւոր դիակի պէտք է վերածել նաեւ ցեղակոնութիւնը, որ նմանէ՛ իրենց: Ամերիկայի մէջ պէտք է քանդել դա , որ հող եւ ազդեցութիւն չնւաճի արտասահմանում: Այս է թայֆայի պլանը, այս է Ղարսի սերունդի հայրենասիրութիւնը, այսպէս է աշխատում ծանօթ մաֆիան:

Գարեգին Նժդեհը ցեղակոնութիւն-Տարօնականութիւնը ստեղծեց՝ կանխելու համար Ղաշնակցութեան բարոյագրկում-ուժաթափումը, որ իրենց ձեռնասունի ձեռքով անում էին նշուած ուժերը: Հայութեան մէջ գործող ամենաազդեցիկ ու ազգապէտք քաղաքական կառոյցը խարխւելու գերագոյն նպատակով զօրագրկում էին այն: Կեանքը երկրի համար զոհաբերելու պատրաստ իրաւ հայրենապաշտին ապականել-հեղինակագրկել-մէջտեղից վերացնել ջանալով - նրանց տեղը ղեկավար մարմիններ, ՀՅԴ բիւրոյ եւ ընդհանուր ժողովի պատգամաւոր էին խցկում անբարոյական-անինքնասէր-անհայրենապաշտ անձանց, կազմակերպութիւնը զրկում ուժի աղբիւրից, դարձնում արկածախնդիրների որջ, ինչի դէմ 1922 թ. ի վեր անընդմէջ պայքարում էր Նժդեհը: Ահա թէ ինչու էր նա իր 1936 թթ. յունուարի



25-ի, ապրիլի 25-ի եւ այլ նամակներում բիւրօն համարում «հակադաշնակցական թայֆայ».

« Սուրբ մէջ գործի են դրած բոլոր ժանգոտ զէնքերը-կաշառում, խոստում, սպառնալիք եւ այլն: Ա՛յս ճամբով են ուզում շէֆուքին ձեռք բերել նրանք, - գրում է Յ. Յովհաննիսեանին,- որոնք հայոց նորագոյն պատմութեան ամենավտանգալից եւ նեղ օրերին՝ տմարդօրէն լքած են ժողովուրդը: Այդ մեռնել չգիտացողներն են այսօր կռադաշտի վերածել մեր ներքին կեանքը: Ամեն գնով ընտրել՝ահա՛ նրանց կեանքի միակ նպատակը: Իսկ ընտրելուց յետոյ՝ ամեն գնով արգիլել գործելու, ստեղծագործելու, մեռնելու տրամադիր մարդկանց-ահա եւ նրանց միակ գործը: Վրացեանը վերադարձաւ հարաւ. Ամերիկայէն եւ անմիջապէս այդտեղ ուղարկեց մութ անցեալի տէր Աշոտ Արծրունուն: Այդ լակոտը գնացել էր երկիր, եւ երբ վերադարձաւ, այլեւս կասկածներ կային, որ կարմիրների հետ կապ ունի: Ընդի. ժողովը սրան ներս չառեց: Վրացեանը տէր կանգնեց(սրա տակտիկան է՝ տէր կանգնել բոլոր տեսակի վատերին եւ օգտագործել նրանց ընկածութիւնը)սրան եւ շահագործեց... Վերջին տարիները կաշառքը դարձրին զօրաւոր միջոց՝ նիւթապէս ու հոգեպէս աղքատ ընկերներ որսալու: Մարդկանց կաշառում և ուղարկում են իրենց թայֆայի համար պրոպագանդ, իսկ իրենց հակառակորդների դէմ բամբասանք անելու: Դա՛ է օրւայ «յեղափոխական» ու «մարտական» գործը: Սենք ասում ենք՝ երբ մեռնելու տրամադիր մարդիկ կան, կարելի է յեղափոխական գործ անել: Նրանք զգացնել են տալիս, թէ իբր աշխարհում անբարոյականութիւն, իսկ իրենց գրպանում դրամ կայ՝ կարելի է Բիւրօի անդամ ընտրուել և ոչինչ չանել: Չերկարեմ այդ մասին: Է՛լի կրկնում եմ՝

ա. Ատամներով պաշտպանել Յեղակրօն անունը: Անունը փոխելով՝ դաւադիրներն ուզում են սրտից զարկել Յեղակրօն շարժումը:

բ. Պատգամաւորական ժողովում ցաւ յայտնել, որ չօգտուեց Յեղակրօն շարժումէն և չաշխատեց զայն դարձնելու համագաղութային:

գ. Զայրոյթ յայտնել այն «դաշնակցական» վրացեանական թերթերին, որոնք դէմ արտայայտուեցան Յեղակրօն շարժման(«Արագ», «Յառաջ»):

դ. Պահանջել Ընդի. ժողովէն, որ համագաղութայնացնէ Ցեղակրօն շարժումը...

է.3-ի կողմից Ամերիկայում նիւթած դաւը հնարաւոր դարձնող՝ Վրացեանի նամակը, խարդախած պատգամաւորական ժողովը և Սաչաքլեանին հեռացնելը դարձնել խնդրի առարկայ Ընդի. ժողովում և պահանջել Դաւադիրներին արտաքսումը Դաշնակցութիւնից:

Միայն, միմիայն այս ճամփով կարելի պիտի լինի փրկել Դաշնակցութիւնը իր դէմ գործող և զինքը շահագործող թայֆայից և զայն ծառայեցնել Հայաստանին»: Յանդուլեւով, որ 1930-ական թթ. ՀՀԴ շարքերում եւ ընդհանրապէս ամբողջ Ափիւռքում վիթխարի ու անվերապահ հեղինակութիւն ունեցող Գարեգին Նժդեհի ձեռքով Դաշնակցութեան ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ հայացում-ազգայնացումը **իրականութիւն է դառնում եւ հնարաւոր չէ կանխել**, ՀՀԴ ստուերային ղեկավարները Ռուբէնին մղում են զազրելի մի ստորութեան եւս. նա մարդիկ է ուղարկում սպանելու Նժդեհին(տես նաեւ՝ ստորեւ հրապարակուած նամակը) : Յանձին օտարների այդ սրբապիղծ ձեռնասունի, ազգի ու Դաշնակցութեան մէջ անբաղդատելի հեղինակութիւն եւ յարգանք վայելող աննման մեծութեանը սպանել է ձգտում մի մարդ, որին ՀՀԴ բազմաթիւ գործիչների շարքում(Ս. Վրացեան, Հ. Օհանջանեան, Ա. Ահարոնեան, Վ. Նաւասարդեան, Յովհ. Տէւճեան, Համբ. Տէրտերեան եւ տասնեակ ուրիշներ, որոնց մէջ **հինգ հազար զինուածներ**) 1921 թ. անխուսափելի կացնահարումից փրկել էր Գարեգին Նժդեհը... 1936 թ. յունուար 25-ի նամակում Գ. Նժդեհը գրում է.« Հրէշը իր կաշին եւ ոսկորը թուրքէն եւ բոլշեիկէն փրկած իր ընկերոջ կեանքի եւ գործի դէմ դաւելու համար էապէս ծառայեց թուրքին եւ բոլշեիկին... Կեանքիս մէջ անձս, անձնականս պաշտպանելու վատութիւն չեմ ունեցել- կազմակերպուած դաւը միայն զգուսնքս է շարժել եւ խորապէս ցաւեցրել հոգիս այն պարզ պատճառով, որ Հայութեան, տարագիր Հայութեան հոգեւարքի օրերի՛ն իսկ ընկերոջ դէմ դաւելու փաստեր կան: Գուցէ կարեւորութիւն տայի, եթէ գիտակցութիւնս չ'ասէր-«թրքորբոլշեիկ տապարէն քո սրի շնորհիւ փրկուած թշուառականին արժէ՞ պատասխանել»:

Տեսնելով որ անհնար է մեկուսացնել Նժդեհին, որի հետեւորդների յաղթանակը 1938 թ. նշանակուած ՀՀԴ Ընդհանուր ժողովում անկասկած էր, Ռուբէնը ձեռնամուխ է լինում

աննախադեպ կեղծիքներով, կաշառքով ու ահաբեկումներով ընդհանուր ժողովի պատգամաւորներ ընտրել տալ իր մարդկանց: Գ. Նժդեհին ադ մասին վկայում է.« Ընդունելով, որ ընդհանուր ժողովում ես կատաղօրէն պիտի դատապարտեմ ու պատժել տամ խեղկատակներին(նա՛եւ իրեն), նա Բալկանը սատանայական հաշուով խառնշտկեց, որ զայն զրկէ պատգամաւոր ունենալու իրաւունքից-»: Կեղծիքն ու անբարոյականութիւնն այնքան ակնյայտ էր, որ դրա դէմ դժգոհում են նոյնիսկ Դրօն ու Ս. Վրացեանը: Վերջինս, որ ընտրուել էր ընդհանուր ժողովի պատգամաւոր, ի նշան բողոքի, հրաժարուում է մասնակցել Ընդհանուր ժողովին...1938 թ. ՀՀԴ կեղծընտիր Ընդհանուր ժողովը Գ. Նժդեհի հանդէպ իր «յաղթանակը» ի ցոյց դնելու համար, առանց նրա ներկայութեան, մի ողբալի որոշում էլ է կայացնում. Նժդեհին «հեռացնում է» կուսակցութիւնից այն դէպքում, երբ նա աւելի քան ութ ամիս առաջ, 1937 թ. դեկտեմբերին էր հեռացել-«ինքնամեկուսացել» Դաշնակցութիւնից...

Այդ նամակները լրացնում եւ ամբողջացնում են նաեւ ուրիշ աղբիւրներից թռուցիկ յայտնի հետեւեալ իրողութիւնը. համաշխարհային ռազմա-քաղաքական մտքի գագաթ, գաղափարի անբաղդատելի նուիրեալ բացարձակ հանճարին 1933-1938 թթ. ազատութեան մէջ գաղափարական խոշտանգումներով մարտիրոսացրին Դաշնակցութեան յետամնաց ջոջերը՝ Ռ. Տէր Մինասեանի գլխաւորութեամբ, իսկ 1944 թ. հոկտեմբերի 10-ից մինչեւ 1955 թ. յունուարի 21-ը, 11 տարի Ստալինի հրահանգով մարմինը բանտերում խոշտանգելով նահատակեցին դիւապաշտ բոլշեւիկները:

Բանտերում նահատակութիւն օտարների՝ ձեռքով, ազատութեան մէջ մարտիրոսացում՝ իւրայինների ձեռքով: Ահա՛ մեր ժողովրդի բոլոր ժամանակների սրբազնագոյն դէմքերից մէկի կեանքը, երբ թշնամու դէմ կռուադաշտում չէ՛ր ...

**ԹՈՒՐԵՐԸ ՎԱՆԻ ԲԵՐԴԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵՉՄԱՆԱԲԱՐԸ ՈՉՆՉԱՑՐԵԼ ԷԻՆ,  
ՓՈՔՐԻԿ ՄԱՏՈՒՌԸ՝ ԲԱՆԴԵԼ**



Առավուտը սկսվեց Հայր մերով: Արեւմտյան Հայաստան ուխտագնացության վեց օրվա ընթացքում այդ գեղեցիկ ավանդույթը երբեւէ չխախտվեց: Ճանապարհին աղոթում էինք, իսկ եկեղեցիներում «Տեր ողորմյա» երգում: Դա փոքրիկ արարողություն էր, որ յուրաքանչյուրը կատարում էր մեծ նվիրումով: Մեզ թվում էր, թե աղոթքը թեւեր է առնում եւ հանգստություն պարգեւում ոչ միայն անմեղ նահատակներին, այլեւ ուժ տալիս մզկիթի ու գոմերի վերածված հայկական եկեղեցիներին, նրանց գոտեպնդում՝ արիաբար դիմանալու վիրավորանքին ու մահմեդական ծաղրուծանակին:

Ճանապարհը տանում էր դեպի Վան՝ Թովմա Արծրունու, Գրիգոր Նարեկացու, Նահապետ Զուչակի, Խրիմյան Հայրիկի, Արմենակ Եկարյանի, Փանոս Թերլեզեմյանի, Գուրգեն Մահարու, Վարդան Աճեմյանի ծննդավայրը:

Ավանդական պատմագրության մեջ Վան քաղաքը կոչվել է Շամիրամակերտ: Մովսես Խորենացին պատմում է, որ Արա արքայի մահվանից հետո Շամիրամը գալիս է Հայաստան, ճանապարհին կանգ առնում Վանա լճի ափին: Ասորիների թագուհին հրապուրվում է բնությանը, սառնորակ

աղբյուրներով եւ Վանա լճի ափին կառուցում Շամիրամակերտ քաղաքը: Այսօր էլ Վան քաղաքում կա Շամիրամի անունով թաղ: Սա իհարկե առասպել է, սակայն հազարամյա պատմություն եւ մշակույթ ունեցող բոլոր քաղաքների մասին էլ գրվել են առասպելներ, հորինվել հերոսապատումներ:



Վան քաղաքը հիմնադրվել է մ.թ.ա. IX դարի առաջին կեսում: Հնագույն շրջանում կոչվում էր Տուշպա: Ուրարտական պետության կենտրոնական շրջանի Բիայնա երկրում ապրող հայերը քաղաքը կոչել են Վան: Վան անունը համարում են Բիայնայի տառադարձությունը, որը նշանակում է «ապրելու տեղ», «բնակավայր»:

Վանում զարգացած էին ճարտարապետությունը, քանդակագործությունը, գրականությունն ու արվեստի մնացյալ ճյուղերը: Մինչեւ Հայոց ցեղասպանությունը քաղաքում եւ կից Այգեստանում ապրում էին բնիկները՝ հայերը:

Այսօր քաղաքը հիմնականում քրդաբնակ է:

Պատմագրական աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ հիշողություններ Վանի մասին: Չքոսաշրջիկներն ու պատմիչները Վանը ներկայացնում են բնության եւ ճարտարապետական լուծումներով ներդաշնակ մի քաղաք, որը ապշեցնում էր իր գեղեցկությամբ արեւելքի եւ արեւմուտքի ժողովուրդներին:

Ներկայիս Վանը ճարտարապետական լուծումներով ու պատմական դիմագծով չի առանձնանում: Բնաշնչելով եւ բռնագաղթի ենթարկելով Վանի բնիկ ժողովրդին՝ հայերին, թուրքերը մեկ վայրկյան անգամ չհապաղելով՝ ոչնչացրել են նաեւ հայկական տները, թաղամասերը, ավերել են հայկական եկեղեցիները: Վան քաղաքում հայի ներկայությունը հիշեցնող շենքեր չեն պահպանվել:



Հայկական դպրոցները, թաղամասերն ու եկեղեցիները, որոնք մեկ դար առաջ քաղաքի զարդն են հանդիսացել, այսօր ավերված վիճակում են:

Դժվար է խոստովանելը, սակայն ներկայիս Վանը խորթ է հայ ուխտագնացին: Քաղաքը չի պահպանել իր ճարտարապետական դեմքը: Քաղաքում վեր են խոյանում գունավոր բարձրահարկ շենքեր, շատրվաններ, մի քանի տասնյակի հասնող մզկիթներն ու Աթաթուրքի արձանները: Ճարտարապետական համակարգված որեւէ լուծում քաղաքում չկա:

XX դարի սկզբին Վանում եղել է 12 եկեղեցի, որոնցից 10՝ գործող: Քաղաքում գործել են Կեդրոնական եւ Երամյան վարժարանները: Այսօր վարժարանների շենքերը պահպանված չեն, իսկ եկեղեցիները հիմնականում վերածված են գոմերի, աղբանոցների, որտեղ քրդերը պահում էին իրենց խոտը կամ եկեղեցին օգտագործում որպես փարախ: Թեպետ Վանի նահանգապետը խոստացել էր, որ քաղաքի եկեղեցիները պետք է մաքրվեն, նորոգվեն եւ դառնան գործող, դրանք այդպես էլ մնացին խոսքեր, բացառությամբ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու:

Վարագա լեռան զույգ վանքերը գտնվում են համանուն լեռան վրա: Երկու վանքերն էլ Սուրբ Նշան անունն էին կրում: Ժամանակին շեն ու հզոր Վերին Վարագա եկեղեցին այժմ

ավերակ է: Պահպանված քարերն ու փլակույտերի մնացորդները մարդկային դաժանության մասին են վկայում:

Ներքին Վարագի վրա է գտնվում Սուրբ Նշան Վարագա վանքը: Այն կոչվում է Նաեւ Մենաստան Վարագա Սուրբ Խաչի: Եկեղեցին կառուցվել է 10-րդ դարում: 1860-ականներին եկեղեցին համբավ ձեռք բերեց Խրիմյան Յայրիկի օրոք, որը տեղի վանահայրն էր: Խրիմյան Յայրիկը բացեց գիշերօթիկ ժառանգավորաց դպրոցը, հիմնեց տպարան եւ հրատարակեց «Արծիվ Վասպուրականի» ամսագիրը:

Վասպուրական աշխարհի պաշտելի սրբավայրերից մեկն այսօր կիսավեր մի շինություն է: Եկեղեցին տարիներ շարունակ ծառայել է իբրեւ գոմ եւ միայն մի քանի տարի առաջ հայ նվիրյալ ընտանիքի՝ Վուլոյա եւ Յոփսիմե Առուշանյանների ջանքերով ու աջակցությամբ մաքրվել ու բարեկարգվել է: Նրանք պատմում են՝ երբ առաջին անգամ Վարագա եկեղեցի այցելեցին, այն վերածված էր սովորական աղբանոցի: Խոսքերով դժվար է նկարագրել, թե ինչպիսի տեսք ուներ եկեղեցին այդ ժամանակ: Եկեղեցու հարեւանությամբ ապրող քրդերը 11 դարի կենսագրություն ունեցող կառույցը օգտագործում էին որպես աղբանոց եւ գոմ: Յամապատասխան վարձատրության դիմաց տեղացի քրդերից մեկը համաձայնում է մաքրել տարածքը աղբից եւ անասունների կեղտից: Քուրդը պատմում էր, որ 10 բեռնատար մեքենա աղբ է դուրս հանել եկեղեցուց:

Այսօր էլ եկեղեցում կարելի է զգալ գոմի, աղբի, անասունների ու խոնավության հոտը: Արեւմտյան Յայաստանի պահպանված բոլոր եկեղեցիների նման Վարագա վանքում էլ շուրջ մեկ դար աղոթք չի հնչել, պատարագ չի մատուցվել, խունկ չի ծխվել: Խունկի եւ մոմի բույրի փոխարեն եկեղեցում զգացվում է խոնավության սաստիկ հոտը: Եկեղեցու գմբեթը հիմնովին ավերվել է, դուռը փայտյա է, ամեն անգամ բացել-փակելուց տպավորություն է ստեղծվում, որ եկեղեցին կփլվի: Եկեղեցու խորանը չի պահպանվել, ներսը չի լուսավորվում: Պատերին՝ մթության մեջ, կարելի է նշմարել արդեն խամրացած որմնանկարները, սրբերի պատկերներն ու խաչերը: Բազմաթիվ որմնանկարներ խունացել են, գունաթափվել, բազմաթիվ քանդակներ, հատկապես

խաչքարերը, քերված են, տծեւացած: Թուրքերն ու քրդերը այսպէս են արտահայտել իրենց ատելւթոյունն ու անհանդուրժողականութոյունը քրիստոնեւթոյան եւ հայերի հանդէպ:

Առավել անմխիթար ու սարսափելի է եկեղեցու տեսքը դրսից: Երբեմնի գեղեցիկ ու հզոր եկեղեցին այսօր կուչ է եկել, թաքնվել քրդական տների ու գոմերի մէջ: Եկեղեցու ներսում գտնվում է գանձանակ: Եկեղեցի այցելող ուխտավորները այնտեղ որոշակի նվիրատվութոյուն են անում, որ եկեղեցուն հետեւող քուրդը, որը խնդրեց իրեն չներկայացնել, բարեկարգի եկեղեցին, թույլ չտա, որ հարեւան քրդերը եկեղեցին որպէս աղբանոց օգտագործեն: Այժմ եկեղեցին կողպված է: Փայտյա դուռը բացվում է միայն այն ժամանակ, երբ եկեղեցին հյուրեր է ունենում: Գանձանակի հարեւանութամբ կարելի է գտնել մի քանի հաստափոր գրքեր: Յուշամատյաններ են, որտեղ հանդիպում ես մտահոգութոյան, անհանգստութոյան ու ցավի:

Այստեղ իրենց գայրոյթն ու ցավն են արտահայտել ոչ միայն հայ զբոսաշրջիկները, այլեւ օտարները:

Ձոն անունով զբոսաշրջիկը գրում է, որ ցնցվել ու սարսռել է, երբ մտել է եկեղեցի ու կատարյալ լռութոյան մէջ մենակ մնացել աստվածաշնչյան պատկերների հետ:

«Այդ պահին ես գիտակցեցի, որ գտնվում եմ հազարամյա պատմութոյուն ունեցող մի տաճարում եւ խոնարհվում եմ մի ժողովրդի առաջ, ում մասին մինչ այս ճամփորդութոյունը ոչինչ չգիտեի»:

Զաղաքի հյուսիսային մասի հարթութոյան վրա բարձրանում է Վանի միջնաբերդն իր հռչակավոր արձանագրութոյուններով: Զաղաքի հյուսիսարեւելյան մասում գտնվում են Թոփրակ-կալէի բարձունքները: Յենց այստեղ կատարված բազմաթիվ պեղումներով հայտնաբերված հնութոյունները բացահայտեցին Վանի պատմական անցյալը: Ժամանակին այդ հնութոյունների գերակշռող մասը կամ հափշտակվել է, կամ պահվում է եվրոպական թանգարաններում: Բերդ հասնելու համար անհրաժեշտ է կտրել անցնել զառիթափ բարձունքը: Այստեղ ուխտագնացը հանդիպում է փորված քառակուսի դահլիճների, որոնք զարդարանքներ չունեն: Բերդի բարձունքի վրա՝ Նորակառույցի մզկիթի հարեւանութամբ կարելի է գտնել



հայկական խաչքարեր: Դրանք թուրքերն օգտագործել են որպէս սալահատակ: Բերդում հեթանոսական եւ Արծրունիների ժամանակաշրջանի որբէ կառույց չի մնացել. դրանք կործանել է Լենկթեմուրը 1392թ.:

Դեռեւս մեկ ամիս առաջ Վանա բերդի հարեւանությամբ գտնվող հայկական փոքրիկ մատուռն ու գերեզմանաքարը մեր այցելության ժամանակ արդեն չկային: Հայկական արձանագրությամբ հանված գերեզմանաքարի տեղը դեռ թարմ էր, հարեւանությամբ հսկայական մզկիթ էին կառուցում. հայկական մատուռի տեղում նույնպէս շինարարություն էր: Զուրդ շինարարը մեզ սպառնիչ պատասխան չտվեց, թե հայկական եկեղեցու փոխարեն ինչ են կառուցում. ամենայն հավանականությամբ դա հերթական մզկիթն է:

Վանա լճի ափից նավակով ընդամենը 20 րոպէ ուղեւորություն, ու հանդիպում ես Վասպուրական աշխարհի գարդին՝ Աղթամար կղզուն եւ Սուրբ Խաչ եկեղեցուն:

Եկեղեցին այսօր կանգուն վիճակում է. թուրքական կառավարությունն այն մեկ տարի առաջ է վերանորոգել, սակայն հայ ճարտարապետները հավաստիացնում են, որ տաճարի ներսում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ եւ ձեւախեղումներ: Ամբողջ Արեւմտյան Հայաստանում Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին Տիգրանակերտի Սուրբ Կիրակոսի հետ այն հազվագյուտներից են, որոնք մզկիթի չեն վերածվել, աղբանոց չեն եւ գործում են որպէս հայկական եկեղեցի:

Տաճարի ներսում հանդիպում ես բազմաթիվ որմնանկարների, աստվածաշնչյան պատկերների ու խաչի տեսարանների: Մոմ թույլատրվում է վառել միայն դրսում: Թեպետ քրիստոնյա աշխարհը միշտ հայտարարում է, որ եկեղեցու դռները բաց են բոլորի առաջ, իսկ հոգեւորականը միշտորդ է Աստծո եւ մարդու միջեւ, սակայն թուրքերի պարագայում դա խախտվել էր: Եկեղեցու ներսում հոգեւորական չկար, հոգեւորականի փոխարեն տաճար այցելողներին դիմավորում եւ հսկում է թուրք ոստիկանը:

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին զբոսաշրջության լավագույն վայրերից մեկն է: Մեր այցելության ժամանակ եկեղեցի էին այցելել բազմաթիվ զբոսաշրջիկներ Գերմանիայից

Եւ Կանադայից: Նրանք իհարկէ տեղյակ էին, որ եկեղեցին հայկական է, սակայն անընդհատ շեշտում էին եկեղեցու կանգուն վիճակն ու խաչի ներկայությունը՝ հավելելով, որ թուրքերը փաստորէն շատ դժմոկրատ եւ զարգացած ժողովուրդ են: Ցավոք, այդ զբոսաշրջիկները Վանի մնացյալ եկեղեցիները չէին այցելել:

Խաչի ներկայությունը անդադար շեշտում են նաեւ թուրքերը: Յենց եկեղեցու հարեւանությամբ գտնվող տաղավարներում վաճառվում են սարսափելի հայերենով գրքեր եկեղեցու մասին: Յեղիևակները նշում են, որ Սուրբ Խաչը քրիստոնեական տաճար է: Ո՞վ է հեղինակը եւ ովքե՞ր են կառուցել այն՝ գրքում ոչ մի խոսք չկա: Նրանք գրում են, որ թուրքական իշխանությունների մեծահոգությամբ եկեղեցին վերանորոգվեց, գմբեթին խաչ տեղադրվեց, այդպիսով դառնալով քրիստոնյա բազմաթիվ ուխտավորների, հատկապէս հայերի ամենասիրելի վայրը:

Դրսից եկեղեցու տեսքը հրաշալի է: Չարդանախշերը, քանդակներն ու կամարները ընդգծում են եկեղեցու գեղեցկությունն ու երբեմնի փառքը:

Եկեղեցու բակում տեղադրված են բազմաթիվ հայկական գերեզմանաքարեր, հայկական արձանագրություններ ու խաչքարերից պատառիկներ: Դրանց մեծ մասը դարերի պատմություն ունի ու վկայում է հայի ներկայության մասին:

Վանում է գտնվում նաեւ Ագռավի կամ Ակրփու քար կոչվող ժայռը, որը, ըստ ավանդության, կապված է Սասունցի Դավիթ Եպոսի հետ: Փոքր Միերն իր հոր՝ դյուցազուն Դավթի անեծքի պատճառով փակվում է ժայռ-քարանձավի մեջ: Զարանձավի դռները բացվում են տարվա մեջ մեկ անգամ, երկնքից իջնում է մանանա, որով սնվում են Միերն ու իր ձին:

Համաձայն ավանդության՝ Միերն իր ձիու հետ այդտեղ պետք է մնա այնքան ժամանակ, մինչեւ աշխարհում թագավորեն մարդասիրությունը, արդարությունը, ազնվությունը, խաղաղությունն ու գաղափարական կյանքը:

#### ***ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վան-Երեւան***

*Նկար 1. Միերնի դուռը*

*Նկար 2. Աղթամար կղզի*

*Նկար 3. Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցի*

## Historical Churches in Iran

*By: Hamid Taraghi*

The majority of churches in Iran that possess historical and artistic value were built around the eight century A.H. or the 14th century AD, and the period thereafter. Of course, this does not mean that there were no churches existing in the country before that period.

During the reign of Shah Abbas, the Safavid king, his sagacious policies caused a sizable number of Armenians from Armenia and Azarbaijan to transfer and settle in Isfahan and other regions of Iran. A place called Julfa was built at the banks of the Zayande-rud River in Isfahan and became the residence of these migrating people. Consequently, churches were erected in that town. Meanwhile, after a short lapse of time, some Armenians moved to Gilan and some resided in Shiraz.

After the death of Shah Abbas the First, his successor, Shah Abbas the Second, also paid close attention to the welfare of Armenians and more churches were erected in Julfa.

The influx of many Europeans during the reign of the Qajars led to the flourishing of other churches, in addition to those that were constructed previously. A number of these edifices have lasted and acquired architectural and artistic significance.

Azarbaijan is host to the oldest churches in Iran. Among the most significant are the Tatavous Vank ( St. Tadeus Cathedral), which is also called the Ghara Kelissa (the black monastery). This is located at the Siahcheshmeh (Ghara-Eini) border area south of Makou. There is also the church known as Saint Stepanous, which stands 24 kilometers south of Azarbaijan's Julfa town.

Generally, each church has a large hall for congregational prayers; its foremost part is raised like a dais, adorned with the pictures or images of religious figures and it also serves as an altar. Here, candles are lighted and the church mass is conducted by the priest. On the foreground is the praying congregation which face the platform where the priest is leading the rites in the church; this is similar to the Muslim practice of praying facing the niche in the mosque. While the mass is being said, the people stand, kneel, or sit depending on what the rites require.

The structure of churches in Iran follow more or less the pattern of Iranian architecture, or they are a mixture of Iranian and non-Iranian designs.

### **The Saint Tadeus Monastery or the Ghara Kelissa:**

Initially, this church comprised of a small hall with a pyramid- shaped dome on the top and 12 crevices similar to the Islamic dome-shaped buildings from the Mongol era. The difference was that the church dome was made

of stone. The main part of this pyramid structure followed Byzantine (Eastern Roman) architecture, including the horizontal and parallel fringes made of white and black stones in the interior and black stones on the exterior facing.

Since the facade is dominated by black stones, the church was formerly called the Ghara Kelissa (or black monastery) by the natives. During the reign of the Qajar ruler, Fathalishah, new structures were added to the Saint Tatavous church upon the order of Abbas Mirza, the crown prince, and the governor of Azarbaijan. The renovations resulted in the enlargement of the prayer hall and the small old church was converted into a prayer platform, holding the altar, the holy ornaments and a place where the priest could lead the prayers. The bell tower and the church entrance were situated at one side of the new building, but unfortunately, this part remained unfinished.

Meanwhile, due to border skirmishes and other political disturbances in the area during the succeeding periods, the church was abandoned and ruined. Some minor repairs have been carried out in recent years. Each year, during a special season (in the summer), many Armenians from all parts of Iran travel to this site for prayer and pilgrimage. They come by jeeps or trucks after crossing a very rough mountainous passage. They flock around the church, stay for a few days and perform their religious ceremonies. For the rest of the year, however, the church remains deserted in that remote area.

The additions made to the Saint Tatavous church on the order of Abbas Mirza consist of embossed images of the apostles on the facade and decorations of flowers, bushes, lion and sun figures and arabesques, all of which had been done by Iranian craftsmen. The architecture of the church interior is a combination of Byzantine, Armenian and Georgian designs. Beside the large church, special chambers have been built in the yard to shelter pilgrims and hermits.

### **Saint Stepanous Church:**

This is another old church located at an intersection west of the Marand-Julfa highway and east of the Khoy-Julfa road. Also having a pyramidal dome, it is, nevertheless, quite beautiful and far more pleasant to behold than the Saint Tatavous church.

The general structure mostly resembles Armenian and Georgian architecture and the inside of the building is adorned with beautiful paintings by Honatanian, a renowned Armenian artist. Hayk Ajimian, an Armenian scholar and historian, recorded that the church was originally built in the ninth century AD, but repeated earthquakes in Azarbaijan

completely eroded the previous structure. The church was rebuilt during the rule of Shah Abbas the Second.

### **Saint Mary's Church in Tabriz:**

This church was built in the sixth century A.H. (12th century AD) and in his travel chronicles, Marco Polo, the famous Venetian traveler who lived during the eight century A.H. (14th century AD), referred to this church on his way to China. For so many years, Saint Mary's served as the seat of the Azarbaijan Armenian Archbishop. It is a handsomely built edifice, with different annex buildings sprawled on a large area. A board of Armenian peers are governing the well- attended church.

Aside from the above three churches, there are others in Azarbaijan such as the old church built in the eight century A.H. at Modjanbar village, which is some 50 kilometers from Tabriz. Another one is the large Saint Sarkis church, situated in Khoy; this building has survived from the time of Shah Abbas the Second (12th century A.H.). During the reign of the said Safavid king, another edifice called the Saint Gevorg (Saint George) church was constructed, using marble stones and designed with a large dome, at Haft Van village near Shapur (Salmas). A church, also with a huge dome, likewise stands at Derishk village in the vicinity of Shapur, in Azarbaijan.

### **Historical Churches at Julfa, Isfahan.**

The most important historical church in Iran is the old cathedral, commonly referred to as the Vank (which means "cathedral" in the Armenian language). This large building was constructed during the reign of Shah Abbas the First and completely reflects Iranian architecture. It has a double-layer brick dome that is very much similar to those built by the Safavids. The interior of the church is decorated with glorious and beautiful paintings and miniature works that represent biblical traditions and the image of angels and apostles, all of which have been executed in a mixture of Iranian and Italian styles. The ceiling and walls are coated with tiles from the Safavid epoch.

At a corner of the large courtyard of the cathedral, offices and halls have been built to accommodate guests, the Isfahan archbishop and his retinue, as well as other important Armenian religious hierarchy in Iran. The church compound also includes a museum that is located in a separate building. The museum displays preserved historical records and relics, and the edicts of Iranian kings dating back to the time of Shah Abbas the First. It also contains an interesting collection of art work.

Isfahan has other historical churches, the most important of which is the Saint Bethlehem at Nazar Avenue. There are also the Saint Mary church at Julfa Square and the Yerevan church in the Yerevan area.

**The Armenian Church in Shiraz:**

In the eastern section of Ghaani Avenue, in a district called "Sare Jouye Aramaneh", an interesting building has survived from the era of Shah Abbas the Second. Its principal structure stands in the midst of a garden-like compound and consists of a prayer hall with a lofty flat ceiling and several cells flanking the two side of the building. The ceiling is decorated with original paintings from the Safavid era and the adjoining cells are adorned with niches and arches and plaster molding, also in the Safavid style. This is considered a historical monument at Shiraz and definitely worth a visit.

**Saint Simon's Church in Shiraz.**

This is another relatively important, but not so old church in Shiraz. The large hall is completely done in Iranian style while the roof is Roman. Small barrel-shaped vaults, many Iranian art work and stained glass window panes adorn the church.

Meanwhile, another church called the Glory of Christ, stands at Ghalat, 34 kilometers from Shiraz. This building has survived from the Qajar period and is surrounded by charming gardens.

**Saint Tatavous Church, Tehran.**

This edifice is located at the Chaleh Meidan district, one of the oldest districts in Tehran. It stands south of the Seyed Esmail Mausoleum, at the beginning of the northern part of the so-called Armenians' Street. The oldest church of Tehran, it was built during the reign of the Qajar king, Fathalishah. The building has a dome-shaped roof and four alcoves, an altar and a special chair reserved for the Armenian religions leader or prelate. The vestibule leading to the church contains the graves of prominent non-Iranian Christians who have died in Iran, and in the middle of the churchyard, Gribaydof, the Czarist ambassador at the court of Fathalishah, and his companions were laid to rest. They were killed by the revolutionary forces of Tehran at that time.

Meanwhile in Bushehr, there is a church from the Qajar period that is a good specimen of Iranian architecture. All the windows are modeled after old Iranian buildings and the colored panes are purely Iranian art work.

There are also many other churches in Ourumieh, in hamlets surrounding Arasbaran, Ardabil, Maragheh, Naqadeh, Qazvin, Hamedan, Khuzestan, Chaharmahal, Arak, in the old Vanak village north of Tehran, etc. These churches, though, are all deserted and are of little artistic significance.